GSBPM (վիճակագրական բիզնես գործընթացների ընդհանրական մոդել) և GAMSO (վիճակագրական կազմակերպությունների ընդհանրական գործառնական մոդել)

Թվինինգ Հայաստան, 2016թ. օգոստոսի 23.-26
Բացադրիչ. Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգեր
Գործողություն 1.7. Որակի ապահովում

Կարին Բլիքս, որակի համակարգող, Դանիայի վիճակագրություն
kwb@dst.dk

STATISTICS DENMARK

Ներածություն. GSBPM

- Վիճակագրական բիզնես գործընթացների ընդհանրական մոդել
- Ստանդարտացված շրջանակ և ներդաշնակեցված տերմինաբանություն
  - Սահմանելով և նկարագրելով պաշտոնական վիճակագրության արտադրման համար պահանջվող բիզնես գործընթացների խումբը
- Գործընթացային փաստաթղթավորման, վիճակագրական համակարգչային ենթակառուցվածքների ներդաշնակեցման և գործընթացային որակի գնահատման և բարելավման ձևանմուշ
- Դանիայի վիճակագրության վիճակագրական բիզնես գործընթացների մոդելը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE), Եվրոստատի և ՏՀԶԿ-ի համատեղ վիճակագրական բիզնես գործընթացների ընդհանրական մոդելի (GSBPM) 5.0 տարբերակի Դանիական յուրացումն է

Ինչու՞ GSBPM:

Մենք այն իրականացնում ենք Դանիայի վիճակագրությունում, որովհետև ցանկանում ենք.

1) բարելավել վիճակագրության **որակը**

2) Դարձնել վիճակագրության արտադրման գործընթացն առավել **արդյունավետ**

3) Ստեղծել շրջանակ **վերլուծության և աստիճանական բարելավման** համար

1) Որակ

- Վիճակագրական արտադրանքի որակը կախված է երկու գործոններից.
  1. Տվյալներ տրամադրողների կողմից ստացվող տվյալների որակից (մենք կարող ենք ներգործել)
  2. Գործընթացների որակից, որոնցով մենք մշակում ենք սույն տվյալները (մեր վերահսկողության տակ)
- Փաստաթղթավորման գործընթացները հանդիսանում են Եվրոստատի որակի ապահովման շրջանակի (QAF) հիմնաքարը՝ որպես գործողություն, որը միտված է հեշտացնելու եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի կիրարկումը (CoP)

2) Արդյունավետություն

- «Լավագույն փորձառությունների» կիրարկմամբ և նմանատիպ խնդիրների համար ստանդարտացված տվյալների խմբերի և միատարր արտադրական գործընթացների օգտագործմամբ պետք է ստացվեն արդյունավետության օգուտներ.
- Արդյունավետությանն առնչվող հարցերը.
  - Կազմակերպության մի մասի խնդիրներն ի՞նչ աստիճանի կախվածության մեջ են նույն կազմակերպության այլ մասերի տվյալների հասանելիությունից և որակից:
  - Եթե նմանատիպ խնդիրներ իրականցնողները շատ են, ապա ինչու՞ ենք բոլորս դա անում տարբեր կերպ:

3) Վերլուծության և աստիճանական բարելավման շրջանակ

- “Դժվար է բարելավել մի այնպիսի բան, որը նկարագրված չէ:”
- Գործընթացային մոդելը կարող է օգնել մեզ համընդհանուր կոնցեպտուալ, մեթոդաբանական և կազմակերպական հղումով՝ նկարագրելու, վերլուծելու և տարածելու համար մեր վիճակագրական արտադրանքը

- Այն ապահովում է գործիք, որը կհեշտացնի նոր աշխատակիցների վերապատրաստումը և միևնույն ժամանակ դուրս կբերի գիտելիքներ փորձառու աշխատակիցներից, քանի դեռ ուշ չէ

Վիճակագրական բիզնես գործընթացների ընդհանրական մոդել (GSBPM)



Մոդելը հասկանալը



- Սույն փուլը սկսվում է, երբ
  - Նույնականացվում է նոր վիճակագրության կարիք
  - Ընթացիկ վիճակագրության մասին հետադարձ կապը նախաձեռնում է վերանայում
- Այն ներառում է բոլոր գործողությունները, որոնք զուգորդվում են հաճախորդների ներգրավմամբ՝ նրանց վիճակագրական կարիքները նույնականացնելու, բարձր մակարդակի լուծումների տարբերակներ առաջարկելու և այդ կարիքների բավարարման նպատակով բիզնես մոդելների ստեղծելու համար



- Սույն փուլը նկարագրում է մշակման և ձևավորման գործողությունները, և պահանջվող ցանկացած առնչվող գործնական հետազոտական աշխատանք, որն անհրաժեշտ է վիճակագրական արտադրանքը, կոնցեպտները, մեթոդաբանությունները, հավաքագրման գործիքները և գործառնական գործընթացները սահմանելու համար
- Այն ներառում է ձևավորման բոլոր տարրերը, որոնք անհրաժեշտ են՝ սահմանելու կամ կատարելագործելու համար վիճակագրական արտադրանքը կամ բիզնես մոդելի նույնականացված ծառայությունները

- Այս փուլը նաև մասնավորեցնում է բոլոր համապատասխան մեթատվյալները՝ պատրաստ օգտագործման ավելի ուշ վիճակագրական բիզնես գործընթացներում, ինչպես նաև որակի ապահովման ընթացակարգերում



- Այս փուլը կառուցում և փորձարկում է արտադրումը այն պահին, երբ այն պատրաստ է օգտագործման «կենդանի» միջավայրում

- «Ձևավորման» փուլի արդյունքներն ուղղորդում են կրկին օգտագործման ենթակա գործընթացների, գործիքների, տեղեկատվության և ծառայությունների ընտրությունը, որոնք մեկտեղ են բերվում և ձևավորվում այս փուլում ստեղծելու համար ամբողջական գործառնական միջավայր գործընթացը վարելու համար

- Նոր ծառայությունները ստեղծվում են բացառության կարգով, ստեղծված ի պատասխան կազմակերպության մեջ և

դրսից սկիզբ առած ծառայությունների առկա համացանկում բացթողումների: Այս նոր ծառայությունները կառուցված են լայնորեն վերաօգտագործվելու համար վիճակագրության արտադրման ճարտարապետության մեջ

- Այս փուլը հավաքագրում կամ հավաքում է բոլոր անհրաժեշտ տեղեկությունները (տվյալներ և մեթատվյալներ), օգտագործելով հավաքագրման տարբեր քայլեր (այդ թվում տվյալների դուրս բերում վիճակագրական, վարչական և այլ ոչ վիճակագրական ռեգիստրներից և տվյալների բազաներից) և բեռնում դրանք համապատասխան միջավայր հետագա մշակման համար
- Այն ժամանակ երբ այն կարող է ընդգրկել տվյալների խմբերի ձևաչափերի վավերացում, այն չի ներառում տվյալների խմբերի որևէ ինքնուրույն փոխարկերպում, քանի որ դրանք բոլորն իրականացվում են “Գործընթացի“

փուլում

- Կանոնավոր կերպով

արտադրված վիճակագրական արդյունքի համար այս փույը հանդիպում է յուրաքանչյուր կրկնությունում



- Այս փուլը նկարագրում է տվյալների մաքրումը և դրանց նախապատրաստումը վերլուծությանը
- Այն բաղկացած է ենթագործընթացներից, որոնք ստուգում, մաքրում, մուտքային տվյալները փոփոխում են այնպես, որ դրանք կարող են վերլուծվել և տարածվել որպես վիճակագրական արդյունքներ
- Դրանք կարող են կրկնվել մի քանի անգամ, անհրաժեշտության դեպքում: Կանոնավոր կերպով արտադրվող վիճակագրական արդյունքների համար այս փուլը հանդիպում է յուչաքանչյուր կրկնման ժամանակ
- Այս փուլի ենթագործընթացները կարող

են կիրառվել և վիճակագրական և

ոչ վիճակագրական աղբյուրներից ստացված

տվյալների համար (5,6 ենթագործընթացի հնարավոր

բացառությամբ

(Հաշվել կշիռները), որը սովորաբար բնորոշ է

հետազոտության տվյալներին)



- Այս փուլում արտադրվում, քննվում և պատրաստվում են տարածման համար վիճակագրական արդյունքներ
- Այն ներառում է վիճակագրական բովանդակության պատրաստում (այդ թվում և մեկնաբանություններ, տեխնիկական նշումներ և այլն), և ապահովելով որպեսզի արդյունքները “համապատասխանեն նպատակին» և հաճախորդներին
- Այս փուլը նաև ներառում է

ենթագործընթացներ, և գործողություններ, որոնք թույլ են տալիս, որ վիճակագրական վերլուծաբանները հասկանան արտադրված վիճակագրությունը

- “Վերլուծական“ փուլը և ենթագործընթացները ընդհանրական են բոլոր վիճակագրական

արդյունքների համար՝ անկախ նրանից, թե ինչպիսի սկզբնաղբյուրից է եկել այն

- Այս փուլը կառավարում է վիճակագրական արտադրանքի թողարկումը հաճախորդներին
- Այն ներառում է բոլոր գործողությունները, որոնք կապված են մի խումբ ուղիներով ստատիկ և դինամիկ արտադրանքի խմբի հավաքման և թողարկման հետ
- Այս գործողությունները օգնում են մուտք գործել և օգտագործել վիճակագրական կազմակերպության կողմից թողարկված արդյունքները

- Սույն փուլը կառավարում է եզակի գործընթացի կոնկրետ պահի գնահատում՝ հակառակ վիճակագրական որակի կառավարման առավել ընդհանուր և ընդգրկուն գործընթացի
- Այն տրամաբանորեն տեղի է ունենում գործընթացի պահի վերջում, բայց հիմնվում է տարբեր փուլերի ընթացքում հավաքված միջոցների վրա
- Այն ներառում է գործընթացի կոնկրետ պահի

հաջողության գնահատում, քանակական և
որակական միջոցների պատկերում,
և բարելավումների նույնականացում

- Կանոնավոր ձևով արտադրվող վիճակագրական

արդյունքների պարագայում գնահատումը պետք է առնվազն
տեսականորեն հայտնվի յուրաքանչյուր կրկնության համար,
որոշելով թե արդյոք ապագա կրկնություններ պետք է տեղի ունենան
թե ոչ, և եթե այո, արդյոք բարելավումներ պետք է իրականացվեն թե ոչ

Ոչ գծային գործընթաց

- GSBPM-ը կարծր շրջանակ չէ, որտեղ բոլոր քայլերը պետք է իրականացվեն խիստ հերթականությամբ
- Որոշ ենթագործընթացներ կվերանայվեն մի քանի անգամ ձևավորելով իտերատիվ հանգույցներ, մասնավորապես Գործընթացի և Վերլուծության փուլերում



Ինչպե՞ս GSBPM:

- Առաջին բանը, որ մենք արել ենք՝ խնդրել ենք մեր վիճակագիրներին կազմակերպել նրանց աշխատանքային փաստաթղթերը և ֆայլերը և այլն ֆոլդերի կառուցվածքում, որը նման է գործընթացային մոդելին:

- Այսպիսով մենք ստեղծում ենք համընդհանուր հենակետ: Նաև աշխատողների համար տվյալներ և այլ համապատասխան նյութեր գտնելը դառնում է առավել ինուիտիվ:



Ինչպե՞ս GSBPM:

- Դինամիկ փաստաթղթավորում HTML աշխատանքի ձևաչափով՝ որպես նշել -և -սեղմել տեղական կայք մանսավոր վիճակագրության համար



GAMSO

- Վիճակագրական կազմակերպությունների գործունեության ընդհանրական մոդել
- Նկարագրում և սահմանում է տիպիկ վիճակագրական կազմակերպության գործողությունները
- Այն երկարաձգում է GSBPM-ը՝ ավելացնելով գործողություններ, որոնք անհրաժեշտ են վիճակագրական արտադրանքին օգնելու համար
- Երեք հիերարխիկ մակարդակ
  - Ռազմավարություն և առաջնորդություն
  - Կարողությունների կառավարում և կորպորատիվ աջակցություն
  - Արտադրանք

GAMSO


Common Statistical
Production Architecture
GAMSO
GSBPM
GSIM
Modernised
Statistics
Methods
Technology

GAMSO



Figure 2 Level 1 of the GAMSO

Մակարդակները GAMSO-ում

- Ռազմավարության և առաջնորդության գործողության ոլորտը բաժանված է 3 ենթագործողությունների.
  - Տեսլականի սահմանում
  - Կառավարում և առաջնորդում
  - Ռազմավարական համագործակցության կառավարում
- Կարողությունների կառավարումը բաժանված է 4 ենթագործողությունների.
  - Կարողությունների բարելավումների պլանավորում
  - Կարողությունների բարելավումների զարգացում
  - Կարողությունների մշտադիտարկում
  - Կարողությունների իրականացման աջակցություն

Մակարդակները GAMSO-ում (շար.)

- Կորպորատիվ աջակցությունը բաժանված է 10 ենթագործողությունների.
  - Բիզնեսի և կատարողականի կառավարում
  - Ֆինանսների կառավարում
  - Մարդկային ռեսուրսների կառավարում
  - ՏՏ կառավարում
  - Վիճակագրական մեթոդաբանության կառավարում
  - Տեղեկատվության և իմացության կառավարում
  - Հաճախորդների կառավարում
  - Տվալները տրամադրողների կառավարում
  - Շինությունների և ֆիզիկական տարածքի կառավարում
  - Որակի կառավարում

Կորպորատիվ աջակցություն